ՀՀ Արարատի Մարզի
«Տափերականի ԲԱ»
Փակ Բաժնետիրական
Ընկերություն

Respublic of Armenia
Medical Dispensari
Taperakan
Closed joint-stock
company

**Հեռախոս՝ 6 - 05- 48 ՀՎՀՀ04104972**

**«22» դեկտեմբերի 2015թ.**

«ԳԱ4-ՇՀԱՊՁԲ-11/16» ծածկագրով շրջանակային
համաձայնագրերի միջոցով գնում կատարելու
ընթացակարգի հնարավոր մասնակիցների
ղեկավարներին

## Հարգելի մասնակից

«ԳԱ4-ՇՀԱՊՁԲ-11/16» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Տափերականի ԲԱ» ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքերը:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիրն է հանդիսանում ____ՏԲԱ-ՇՀԱՊՁԲ-11/16-2015/3

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել « Տափերականի ԲԱ » ՓԲԸ, ՀՀ Արարատի մարզ, գ.Տափերական, Շահումյանի 1 հասցեով, ընդունարան, մինչև 2015թ հունվարի 12-ը, ժամը 14:00-ը: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Գևորգ Ամիրջանյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում ըստ ստացման հերթականության, ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն «Տափերականի ԲԱ» ՓԲԸ-ի շենքում, ՀՀ Արարատի մարզ, գ.Տափերական, Շահումյանի 1 հասցեով, ընդունարանում, 2015թ. Հունվարի 12-ին, ժամը 14:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում «Տափերականի ԲԱ» ՓԲԸ-ի կարիքների համար «Բժշկական նշանակության ապրանքների» ձեռբբերումը:

«Տափերականի ԲԱ» ՓԲԸ-ի կարիքների համար «Բժշկական նշանակության ապրանքների» մատակարարման (մատուցման, կատարման) (որոնք կազմված են 14 չափաբաժիններից). տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանները ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի ամբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է հրավերի (ծանուցման) N 1 հավելվածում: Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված.

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (հավելված N5). ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային հասցեն.

Բ. գնային առաջարկ (Հավելված N 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ -11/16» ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

**«Տափերականի ԲԱ» ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝** taperakanak@mail.ru

*Հարգանքով*

Տնօրեն՝ Ա. Չոբանյան